ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«29» դեկտեմբերի 2023թ. No 27/1-Ք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/11

Մասնակից՝ **«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ**

ՀՎՀՀ 00522502, գործունեության հասցե՝ Ք.Երևան,Երկաթուղայիններ 4փ 2/6,

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեսահսկման համակարգի սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու համար «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն համակարգի միջոցով ներկայացնում է հայտ:

Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 14.12.2023թ-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում գնահատվել է առաջին տեղեր զբաղեցրած մասնակցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերի՝ սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության հանգամանքը:

4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի հայտի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ սույն հրավերի պահանջների նկատմամբ . մասնավորապես ներկայացվել է այլ պատվիրատուի կողմից հայտարարված այլ ծածկագրով ընթացակարգի մասնակցության վերաբերյալ էլեկտրոնային ստորագրությամբ չհաստատված դիմում հայտարարություն, չի ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր, համակարգում «Ներկայացված հայտեր բաժնում» (4-րդ և 5-րդ չափաբաժիններ) չի լրացրել

«ապրանքի ամբողջական նկարագիր» դաշտը: «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին 14.12.2023թ-ին առաջարկվել է հրավերով սահմանված ժամկետում և կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն օրը պարզվել է, որ տեխնիկական վրիպակի արդյունքում շտկման վերաբերյալ ծանուցումը «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի փոխարեն ուղարկվել է այլ մասնակցի: Հանձնաժողովի կողմից, վրիպակի շտկման գործիքակազմի բացակայության պատճառով, նույն օրը այդ մասին համակարգի միջոցով ծանուցվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որի արդյունքում 15.12.2023թ.-ին վրիպակը շտկվել է, և հայտերի շտկման ծանուցում «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ուղարկվել է 15.12.2023թ.:

Հրավերով սահմանված ժամկետում «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները, որն արձանագրվել է 19.12.2023թ-ին գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ: Նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել այն:

Հաշվի առնելով, որ ի հայտ է եկել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված հիմքերը (մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը)՝ հանձնաժողովը որոշել է նաև նախաձեռնել ընթացակարգ՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Եզրահանգում

Ի հայտ է եկել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված հիմքերը (մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը), որը հանգեցրել է մասնակցի

հայտի անբավարար գնահատմանը և հայտի մերժմանը, ինչպես նաև ընթացակարգը 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում եմ՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/29/2023

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ